

ծովափնային հայրենիքը կայ: Աւելի գովառեան արժանի են մեր երկրորդական տանտէրները, նրա հայրն ու եղբայրը, որոնք ոչ պակաս վնասեցին մեր հասարակութեան: Մեղքեցիք էլ մի զարմանալի բնաւորութեան տէր են. եթէ մէկը իրա իրաւունքը պաշտպանելու համար հաւածվում է տանտէրից, իսկայն չանթիւր են թափում նրա վրա, թէ անդին է, քեզ ինչ, որ վատ բան արեց տանտէրը: Ախր ինչ գործք է. բու բաժին վնասը մի—երկու բուրջ է, անխօս տուր, մինչև որ Աստուած ողորմած է:...

Վերջապէս, մեղքեցիք նեղ օրում են. այնպէս են կարծում, թէ անկարելի է տանտէրից ընդհանուր հրապարակական հայր պահանջել. այնպէս են կարծում, թէ մեր այս տանտէրը երկնուտ իջած մի պատիւ է, որին պիտի համբերած մինչև անցնիլը, եթէ ոչ ուրիշ հնարք չը կայ. այնպէս են կարծում, թէ տանտէրը կարող է իրա կիրքը լցուցանելու համար մէկին ծնծել, միւսին հայտնել և մէկէլին բանտարկել կամ տուժել և դեռ ես երազել մին քանի տարիներ էլ այդ պաշտօնը վարելու: Իսկ իրանք միմիայն վրում են նրանով միայն, որ երկու-երեք հաւաքվելով մի առանձին տեղ, իրարից հարցանում են իրանց աղաւաղված լեզուով՝ «այս հիւրդ արեք մեր մէջիւրուն ձիւքն», ասելը մեր տունը լափ քէտնովալայ: (այսպէս անհնար մեր տանտէրի ձեռքից, ահա մեր տունը բոլորովին քանդվեց):

Այսքանով կարծեմ ամեն ինչ լոյսի պէս պարզվեց, և մեր տանտէրը, որ փողոցումն պահանջում էր, թէ «ես ինչով եմ անտանելի, թող բացատրեն», ես այսքանը միայն կարողացայ բացատրել, որոնց մէկն էլ կարողութիւն չունի վերատուգվելու, որովհետեւ նամակիս մէջ տեղ չեն ունեցել անձնականութիւն, կիրք և այլն. այլ մի դառն ճշմարտութիւն, վերաբերվող մեր ողորմելի հասարակութեան ներկայացուցչի ճարպիկութիւններին:

Այժմ գտնուում եմ գէպի իմ յարգելի հասարակութիւնը, որ նա բաւական համարի այսքան երկարօրէն քննելու հակառակ իր իրաւունքները, գէթ օրինակ առնելով դրացի հասարակութիւններից, չը վախճայ տանտէրի լնտրիկաներից, որ և հասկանայ, որ բռնակալ դարը անցել է, և ընկած հասարակութիւնը վերականգնելու համար նոր տանտէրի օրինաւոր ընտրութիւն թող անէ, այն առածի համեմատ, թէ չլաւ է որ մի հնդկատանցի փշանայ, քան բոլոր Հնդկատանը):

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԻՔՍԱՆԻՐԱՊՈՒՅՑ մեզ գրում են, որ մի պարոն, բարեկամանալով փոստատան ծառայողներից մէկին հետ, գողանում է «Մշակի» խմբագրատան անունով ուղարկված նամակները: Երբ այդ բոլորը կը ստուգվի, մենք կը յայտնենք պարոնի անունը:

Շատ անգամ յայտնել ենք մեր թղթակիցներին, որ իրանց նամակները որքան կարելի է պարզ գրեն և տողերի մէջ փոքր ինչ լայն տեղ թողնեն: Երբեմն ստացվում են այնպիսի նամակներ, որոնց մէջանք այնքան գոռոտ է, որ բոլորովին չէ կարգացվում:

Գարձեալ խնդրում ենք մեր բաժանորդներից, որոնց վրա «Մշակի» այս տարվայ ապաւիններ են մնացել, ուղարկել մեզ չուտով իրանց վրա մնացած պարտքը:

«Մշակի» խմբագրատունը քայ է ամեն օր, քացի կիրակի օրից, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ և երկուշաբթի 4 ժամից մինչև 6 ժամ:

Ինչպէս յայտնեցիք մեր անցեալ համարում, թիֆլիսի հասաւ ամերիկական մի խումբ, Վերոնի-Վեստ պարոնի առաջնորդութեամբ: Այդ խումբը բաղկացած է 8 անձնանոցից, չորս կանանցից և չորս տղամարդկանցից: Նրանք տալիս են կոնցերտներ և թաղանթներ Մանաւանդ, ինչպէս երևում է, ամեն տեղ մեծ փութորէ: Երբ 38 զանգակների վրա ածած մեծ կոնցերտը, թէ կանաչք և թէ աղամարդիկ պար են դալին այլ և այլ պարեր: Այդ խումբը, ինչքան կարողացանք ծանօթանալ լրագիրների քննութիւններից, մեծ հաջակ ունի և ամբողջ աշխարհի ամենա-

բեկի քաղաքներում իր կոնցերտներ և բալետներ է տուել և միշտ ամեն տեղ մեծ համակրութեամբ է ընդունվել հասարակութիւնից:

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ հետեւալը: «Մեր հոգեւոր զարդները ուսումնական տարվայ սկզբից մինչև այժմ մնացած են առանց օրինաւոր հոգաբարձութեան, միայն մի աշխարհական և մի հոգեւորական են կառավարում նրանց: Հոգեւոր կառավարութիւնը օգուտ քաղելով ժողովրդի անտարբերութիւնից, ժողով չէ կայացնում նոր ընտրութեան համար, ստեղծելով իրան հաճելի է այս երկուսի կառավարութիւնը: Նրա հրամանով տէր Յովսէփ քահանայ Բունիաթեանց այս տարի քացեց երկրորդ դասատուն տղայոց համար, և այդ դասատուն աշակերտները մինչև այն աստիճան անպատրաստ են, որ իրանք ուսուցիչները խոտովանվում են թէ այս տարի նրանցից ոչինչ չի դառնայ: Բայց, այնու ամենայնիւ հասարակութիւնը պիտի ծախսէ այս դասատուն վրա տարեկան մօտ 800 բուրջ:»

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում է հետեւալ տ ա կ ս ա առաջին հարկաւորութեան ուսուցիչների վրա դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը եկող 1881 թիւ Հացի ֆունտը, որ թիւված է կրուպչատկա ասված ալիւրից առաջին տեսակի արծէ 6 կոպ., երկրորդ տեսակի 5 1/2 կոպ., խառն զորենի ալիւրի հետ ֆունտը 4 1/2 կոպ.: Թոնրի մէջ թիւած հացի ֆունտը առաջին տեսակի 6 1/2 կոպ., երկրորդ 5 կ., լաւահներ առաջին տեսակի 7 1/2 կ., երկրորդ 6 կ., երրորդ 5 1/2 կ.: Տաւարի մսի ֆունտը առաջին տեսակի 10 կ., երկրորդ 8 կոպ., ֆիլէտ 16 կոպ., ոչխարի մսի ֆունտը 10 կոպ., խոզի մսի ֆունտը առաջին տեսակի 11 կոպ., երկրորդ տեսակի 10 կոպ.:

Այս օրերս հրատարակեցաւ Թիֆլիսի Մ. Մարտիրոսեանցի տպարանում Նիկողայոս Ալիլանեանցի «Երուսաղէմ երկրորդ» ողբերգութիւնը: Թիֆլիսեցիները կարող են գիրքը ստանալ Մարտիրոսեանցի տպարանում, իսկ օտարաքաղաքացիք կարող են ուղղակի հեղինակին Մայկոպ քաղաքը գիրով կամ ինքնակի վճարելով երկու բուրջ:

Մայրաքաղաքի լրագիրները պաշտօնապէս հաղորդում են որ Երևանի և Քոթայիկի նահանգների վարժապետանոցները բարձրագոյն հաստատված են:

Ընթերցողին արդէն յայտնի է հեռագրից որ աղի վրա սկսելը նորերումս վերցվեցաւ Ռուստատանում բարձրագոյն հրամանով: Բոլոր ուսուցող լրագիրները մեծ գովառանքներով են խօսում կառավարութեան այդ կարգադրութեան մասին:

Ռուսաստանում գրեթէ ամեն օր նոր լրագիրներ և ամսագիրներ ստեղծելի պէս են բռնում: Եկող տարվանից կը հրատարակվի Մոսկվայում մի ամենօրեայ թերթ «Московский Телеграф» որի խմբագիրն է Բոգդանով, իսկ Ս. Պետերբուրգում մի պատմական և գրականական ամսագիր կուն Սալիասի խմբագրութեամբ «Полярная Звезда» վերնադրով:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի վաճառականներից մինը Ս. Ս. Ա. իբր թէ մի չինու պարտատուրճակ է չինու ուրիշ մի վաճառականի, Ա. Ե-ի վրա, ու լի է ա գ ա ր բ ու լ զ ու մ արի, որ կանխիկ վճարած է, առաջին պահանջմամբ տանալու պարանոյ: Ասում են որ հասարակ թղթի վրա գրված պարտատուրճակը ճշմարիտ ստորագրված է Ա. Ե-ի իսկական ձեռքով, միայն թէ դա եղել է մի անմեղ թղթի կտոր, որի վրա գրված էր պարոնի ստորագրութիւնը, իսկ Ս. Ս. Ա. պարտատուրճակի լուծանդակութեամբ գրութիւնը աւելացրել է վերեւից: Գործը յանձնված է արդէն Նահանգական դատարանին, որ և կը քննվի այս դեկտեմբերի 5-ին: Բոլոր վաճառականները վրդովված են:

ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վանէն հետեւեալը կը գրեն. «Մէկ ամիս է որ Լեւոնի արքունական թանգարանի կողմէն հնախոյզ մը խրկուած է հոս: Ասպուրականի հնութիւնները քննելու և իրենց դարաւոր քունէն զարթու-

ցանելու. այդ անձն է հանրաճանօթ Հօրմուզ Բասամ որ Կ. Պօլսոյ նախորդ Անգլիական դեսպան Սըր Լէյքըրտի հետ 40 տարի առաջ Հին-Նիւուէի և Բաբելոնի հնութիւնները խուզարկած է: Պ. Բասամ կառավարութիւնէն երկու տարուան համար արտօնութիւն ստացած է վասպուրական գաւառին մէջ գտնուող բոլոր աւերակները խուզարկելու. նա սկսաւ քաղաքիս հարաւային կողմը գտնուած հողաբլուրը փորելու, ուր բաւական հետաքրքրութիւն չարժող հնութիւնք գոչու եկան: Թուրքերը «Թօփրադ Գալէ» կը կոչեն այդ տեղն, որ կը նշանակէ հողաբլուր, և յիշատի թէ տեղւոյն դիրքէն և թէ՛ գտնուած իրերէն կրնայ դիւրաւ մակարեւելի որ դա բերդ—աշտարակի նման բակ մը պէտք է եղած լինի. Պ. Բասամ կըսէ թէ Մինուազ Ա. Ասորեստանցոց թագաւորի ժամանակէն այսինքն 3000 տարուան է այս հնութիւնը: Վերադարձաւ այն աստիճան փռած են գտնուած բաներն, որ մարդ ձեռք դպցուցածին պէս կը փշրին և փոշոյ կը վերածուին. պղնձեայ վահաններ գտնուեցան առիւծի նկարներով և բեւեռագիր արձանագրութեամբ. հողէ շինուած բաւշեր (կրժիւր), փղոսկրէ քանդակեալ կոյս պատկերներ, արդյրէ թափու ջուլի գլուխներ խիստ նուրբ արհեստագործուած, նետի սլաքներ և խոշոր գամեր դուրս բերուեցան հողաւորներու տակէն, և ի վերջոյ յղկեալ փայլուն սև քարերէ կառուցեալ մի հոյակապ շէնքի մնացորդները երևան եկան, որոնց վրայ ամեն տեսող զարմացած է: Պ. Բասամ նաև թէ՛ վանայ բերդին վրայ եղած և թէ՛ եկեղեցոյ և վանքերու մէջ պահուած բեւեռագիր արձանագրութեանց օրինակներն առաւ Անգլիա խրկելու համար: Նա այս շարքում կը մեկնի ասկէ Բաղէշ, Սղեբդ, Մուսուլ և Պաղտատ երթալու և այդ տեղուանքն ալ հնախօսական խուզարկութիւններ ընելու: Պ. Բասամ ազգով Ասորի է, բայց լաւ Անգլիերէն կը խօսի:

Գոհութեամբ կ'իմանամք թէ Պարոնայք Առաքել խնամեան և Յովսէփ Քարաքոչեան որք մայրաքաղաքիս երկրաչափական (Պոնդ է շօսէ) վարժարանին մէջ իրենց ուսումն աւարտած և վկայական ստացած էին, Սեբաստիոյ նահանգին Երկրաչափ Ծարտարապետ անուաներ են, Քարաքոչեան Պ. Յովսէփ անտառաբանութեան վարժարանէն ևս վկայական ստացած էր:

Գեր. Հասունեան երէկ մայրաքաղաքէս մեկնեցաւ ի Հոռոմ, Կարգինալութեան փեղոյն ստանալու համար: Նորո բացակայութեան միջոցին Գեր. Աղաբեան՝ Պատրիարքական տեղապետութիւն պիտի ընէ:

Երէկուան Մէսէնձըրի մէջ կը կարգաւթ թէ ոստիկանութեան նախարար՝ պահաւորաններուն վրայ Հայաստանի հին թագաւորաց պատկերները կամ նմանութիւնները կրող սիկարի թուղթերուն վաճառումն արդիւր է:

(Մասիս)

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքից «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են նոյեմբերի 21-ից, որ յունական ազգային ժողովի իսկական պարագմունքները դեռ նոր են սկսվել, որովհետեւ պատերազմական ծովային և ֆինանսների մինիստրները նորերումս առաջարկեցին ժողովին իրանց նախագիծները, որոնց քննելը ժողովը անմիջապէս սկսեց: Մինիստրները պահանջում են նոր կարգադրութիւններ գինուորական աստիճանների մասին և ա-

ռանձին կրեդիտ մի քանի պատերազմական նոր նաւեր գնելու համար: Բացի այդ մինիստրները առաջարկում են յունական վանքերը, գինեագիւնները և այլ դպրոցները հիւանդանոցներ դարձնել, իսկ յունական զօրքերի թիւը հասցնել 80,000-ի: Այս բոլորից երևում է, որ Բունաստանը մտադիր է վճռողական գործողութիւններ ըսկսել: Վժուար է ենթադրել, որ դիպլոմատիկան ձնշուձնիկը կարողանան արգելիլ Բունաստանին պատերազմի սկսելը: Ամեն բանից երևում է, որ մեծ պետութիւնները անուշադիր չեն թողնում յունական խնդիրը: Չը նայելով, որ Բունաստանը ահալին ծախսեր է անում, նրա ֆինանսների դրուութիւնը այնքան լաւ է, որ նորերումս կարողացաւ 1824 թուականի փոխառութեան հաշուում վճարել Լոնդոնի բանկին երկու անգամ աւելի քան թէ հարկաւոր էր:

Աթէնքից «Daily News» լրագրին գրում են նոյեմբերի 29-ից, որ յունական թագաւորը ընդունեց Փրանսիական դեսպանին, որի հետ նա նոյն քաղաքավարութեամբ վարվեց, ինչպէս գերմանական դեսպանի հետ, բայց այնուամենայնիւ չը խոստացաւ, որ Բունաստանը կը դադարի դիւնաւորվելուց: Գործը այնպիսի դիրք է ստացել, որ անպատճառ պէտք է կատարվի Բերլինի կոնֆերանցիայի վճիռը: Թագաւորը խոստացաւ չափաւոր լինել, որովհետեւ այդ բանը խնդրում են Ֆրանսիա և Գերմանիա, Բունաստանի բարեկամ պետութիւնները, բայց նա չի արձակի յունական զօրքերին, մինչև Բունաստանը չը ստանայ Լպիրոս և Թեսալիա: Գրեթէ հաստատ կարելի է տեղ, որ դարնանք պատերազմ կը սկսվի Բունաստանի և Թուրքիայի մէջ, եթէ այս վերջինը զիջումներ չի անի Երկրին կոնֆերանցիայի վճիռ համեմատ:

Նոյն լրագրին Աթէնքից հաղորդում են, որ լորդ Գրենվիլի նորերումս խօսած ծառ շատ լաւ տպաւորութիւն գործեց Բունաստանի մէջ: Ժամանակ էր, որ անգլիական մինիստրներից մէկը մի քանի քաջակրկան խօսք արտասանէր յունական խնդրի վերաբերութեամբ, մանաւանդ որ մի քանի պետութիւններ սաստիկ ձնշում էին գործում Վէորդ թագաւորի վրա, որ նա փոխէր իր քաղաքականութիւնը: Բունաստանը չէ կարող հրաժարվել իր պահանջներից և նրան կարող է բաւականացնել Բերլինի կոնֆերանցիայի որոշած սահմանը: Պատերազմական պատրաստութիւնները աջողութեամբ առաջ են գնում և դրամական պատկաւութիւն չը կայ: Գերմանական դեսպանը կը մնայ Աթէնքի մէջ գոնեա վեց ամիս և դրանից երևում է, որ իշխան Բիսմարկ մըտադիր է իր ազդեցութեան տակ պահել յունական թագաւորին: Բայց մինչև անգամ Բիսմարկի ահալին ազդեցութիւնը անկարող է պատերազմի առաջն առնել: Եթէ սուլթանը չը զիջէ Թեսալիա և Լպիրոս:

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Լոնդոնի «Times» լրագրին վերջնային հեռագրում են, որ նոյեմբերի 26-ին, ինչպէս պայմանաւորված էր, սկսվեցաւ Դուրյնիօի յանձնելը չեռնօգորցիկներին: Երեք յեան ժամի 6-ին չեռնօգորցիկները արդէն գրաւել էին թէ Վուլցինիօ և թէ նրա ջրբաւայ ամրացած բարձրութիւնները: Ամեն ջակայ ամրացած բարձրութիւնները, կարբան այնպէս կանոնաւոր կատարվեցաւ, կարբան պահանջներ էին փոխվում: Ամենից առաջ չեռնօգորցիկները գրաւեցին Մապուրայի բարձրութիւնները, որտեղ մնացին